ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

ՀՈԴՎԱԾ 327. ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԱՄ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ,ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐԻՑ ԿԱՄ ~~ԶՈՐԱՀԱՎԱՔՆԵՐԻՑ~~ ***ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ*** ԽՈՒՍԱՓԵԼԸ

1. Ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայության հերթական զորակոչից, վարժական հավաքից կամ ~~զորավարժանքից~~ ***զորահավաքային զորակոչից*** խուսափելը՝ այդ ծառայությունից ազատվելու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայության դեպքում՝

պատժվում է կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է՝

1) իրեն մարմնական վնասվածք պատճառելու կամ հիվանդության սիմուլյացիայի ճանապարհով,

2) փաստաթուղթ կեղծելու կամ խաբեության այլ ճանապարհով՝

պատժվում է կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից հինգ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

(327-րդ հոդվածը փոփ. 16.12.05 ՀՕ-34-Ն օրենք)